

---

---

ԵԶՐԱՓՈՒՅԻՉ ԿԱՅՈՒՆ ԲԱՆԱԶԵՎԵՐԸ  
ՏԱՎՈՒՇԻ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ

ԷՍԹԵՐ ԽԵՄՉՅԱՆ

Ժողովրդական հեքիաթներում հանդիպում են հեքիաթին բնորոշ կրկնվող լեզվական միավորներ, որոնք կիրառվում են հեքիաթային պատումի ողջ ընթացքում և կոչվում են ավանդական կայուն բանաձևեր: Ըստ գործառույթի դրանք լինում են սկսվածքային, միջնամասային և եզրափակիչ, որոնց անվանումը պայմանավորված է հեքիաթի համատեքստում գրաված դիրքով: Կայուն բանաձևի յուրաքանչյուր տեսակը որոշակի դեր է խաղում հեքիաթի կառուցվածքի մեջ:

Սովորաբար հեքիաթի ավարտը բանասացները ներկայացնում են հեքիաթի պատումից բխող եզրակացությամբ ու մաղթանքներով, որոնք ուղղված են հեքիաթի հերոսներին և ունկնդիրներին: Այդ մաղթանքներն ու եզրակացությունները նույնպես դարավոր մշակում անցած բանաձևեր են և կոչվում են հեքիաթի եզրափակիչ բանաձևեր: Եթե սկսվածքային բանաձևերը նախապատրաստում են ունկնդրի մուտքը հեքիաթային իրականություն, ապա եզրափակիչ բանաձևերը հեքիաթային աշխարհից նրանց վերադարձնում են իրական կյանք<sup>1</sup>: Չափածո նախաբան-սկսվածքն ու չափածո ավարտն օրգանապես կապված չեն հեքիաթի սյուժեի հետ, և դրանց կիրառությունը պարտադիր չէ, թեև դրանք շրջանակի դեր են կատարում հեքիաթի համար: Ինչ վերաբերում է սկսվածքային և եզրափակիչ բանաձևերին, ապա դրանց ներկայությունը հեքիաթի կառուցվածքում անհրաժեշտ է, որովհետև դրանք սկզբից որոշակի տեղեկություն են հաղորդում հեքիաթի հերոսների և նրանց առաջադրված խնդիրների մասին, իսկ վերջում ամփոփում են հեքիաթի սյուժեն:

Ի տարբերություն սկսվածքային բանաձևերի, եզրափակիչ բանաձևերն ավելի բազմազան են, որից բխում է նաև տարբնույթ բանաձևերի մեծաքանակությունը: Եզրափակիչ բանաձևերի դրսևորումն ազգագրական յուրաքանչյուր տարածաշրջանում յուրովի է ընթացել և ունեցել է իր ինքնատիպ նկարագիրը: Տավուշի մարզի<sup>2</sup> հեքիաթների եզրափակիչ բանաձևերը, զարգացնելով ընդհանուր հայկական հեքիաթային բանաձևերի ավանդույթը, այդ կառույցի մեջ ներդրել են նաև տեղական լեզվամտածողություն ու հոգեկերտվածքային բնորոշ տարրեր:

Տավուշի հեքիաթային ավանդության մեջ պահպանված է ինքնատիպ չափածո ավարտ, որը հաջորդում է բուն ավանդական եզրափակիչ

---

<sup>1</sup> Э. В. Померанцева. Судьбы русской сказки. М., 1965, с. 91.

<sup>2</sup> Տավուշի մարզն ընդգրկում է Խորհրդային Հայաստանի Իջևանի, Շամշադինի և Նոյեմբերյանի շրջաններն ու Դիլիջան քաղաքը՝ իր շրջակայքով:

բանաձևին: Օրինակ՝ «Ասուց ընկավ երեք խնձոր, մեկը՝ աստղին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ անգաճ դնողներին: Կարող ա պատահի էտ մարդիկ կովեն, խնձորների մեջ մեծ ու փոքր կլնի: Խնձորները նորից կբաժանեմ, մեկը՝ շատ խոսողին, մեկը՝ պատմություն պատմողին, մեկն էլ՝ ինձ:

Վազով էկան մուկն ու կատուն,

Ամեն մարդ իրանց տուն,

Ով չգնա իրանց տուն,

Մուկը ընգնի իրանց թթուն:

Ձեզ տուն կա,

Մեզ էլ քուն գա:

Աման, չաման, տաշտ ու մադ,

Մուփրա-սեղան,

Կլեկեմ իմ քրեղան,

Հայերից վնասվող չլնի,

Թշնամուց էլ մնացող չլնի»<sup>3</sup>:

(Տարբերակ՝ Ագահ մարդկանցից էլ մնացող չլնի:)

Մույն բանաձևն իր կառուցվածքով երկմաս է: Առաջին մասը խնձորաբաժանման ավանդական երևակայական արարողությունն է, որը բանասացը միտումնավոր փոփոխության է ենթարկել և ստեղծել մի խորամանկ հորինվածք, ըստ որի, փաստորեն, բաժանման ենթակա երեք խնձորն էլ բաժին է հասնում բանասացին («Շատ խոսողին, պատմության պատմողին, ինձ»): Մույն հնարքի արմատները շատ խորն են, ու այն բնորոշ է նաև հարևան ազգերի ասացողական պրակտիկային<sup>4</sup>: Խնձորի բաժանման այս արարողակարգի մեջ պահպանվել է հեքիաթասացին վարձատրելու վաղեմի սովորույթի հեռավոր արձագանքը<sup>5</sup>: Բանաձևի երկրորդ՝ չափածո հատվածը, իր բնույթով հիշեցնում է մանկական ծաղրերգ: Այս չափածո ավարտը որոշակի նպատակ է հետապնդում՝ տեղեկացնել ունկնդիրներին, որ հեքիաթն ավարտվել է և տուն գնալու ժամանակն է: Չափածո բանաձևի վերլուծությունը ցույց է տալիս, որ այն իմաստաբանական-կիրառական տեսակետից երկմաս է: Չափածոյի առաջին մասն իրենից ներկայացնում է պատկեր-բանաձև, որի կիրառական նպատակը ոչ միայն բացահայտ ասվում է, այլև առաջադրվում է որոշակի պայման՝ սպառնալիք-զգուշացման տեսքով, որը նպատակաուղղված է ունկնդիրներին հեքիաթասպատման լսարանից հեռացնելու համար: Բանաձևի այս հատվածից հետևություն է արվում նաև, որ հեքիաթասպատման իրականացվում է երեկոյան ժամերին, որի եզրափակիչ ակորդն է՝ ցրվել տներն ու վայելել հանգստացնող քունը: Չափածոյի երկրորդ մասով բանասացը թշնամուց

<sup>3</sup> ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ (այսուհետև՝ ՀԱԻԲԱ), FFX: 0045,01-0045,01, Ա. Կ ա ր ա պ է տ յ ա ն. Նոյեմբերյանի շրջանի ժողովրդական բանահյուսությունը, Նոյեմբերյան, 1961, «Թարավրերի իրեք տղեքը», բանասաց՝ Մացակ Հակոբյան:

<sup>4</sup> Турецкие сказки. М., 1986, с. 145, «Дели-Гюджюк».

<sup>5</sup> Հայտնի է, որ բազմաթիվ ազգերի մոտ եղել են մասնագետ հեքիաթասացներ, ովքեր իրենց հացը վաստակել են հեքիաթասացությամբ, հետևաբար, պատումի ընթացքում տարբեր բանաձևերի միջոցով ունկնդիրներին հիշեցրել են վարձատրության մասին:

ու ազահ մարդկանցից հեռու մնալ և անվնաս կեցություն է մաղթում ողջ հայ ազգին:

Ներկայումս չափածո ավարտների կիրառումը հազվադեպ երևույթ է, նույնիսկ կարելի է ասել, որ իսպառ վերացել է, մինչդեռ եզրափակիչ բանաձևերը թեև սահմանափակ քանակով, դեռևս շարունակում են կիրառվել:

XX դ. երկրորդ կեսին Տավուշի հեքիաթներում նկատելի է հեքիաթի ավարտը՝ առանց եզրափակիչ բանաձևի: Օրինակ՝ «Ասրմ են, թե ծ(ւկ փոնոդին ընգճրփոնուկ են տանրմ, թե.– Քու տղեն էլ մի սիրուն հարս հետը, եկավ»<sup>6</sup> կամ՝ «Էտ տղեն կյ(լիս ա ու հորիցը հրաժարվրմ ա ու ասրմ ա.– Այլևս ես քու տղեն չեմ: Էսքան պ(նր պիրիլուց եղը, որ տ(ւ ինձ ուրեմը հարգեցիր ոչ, ուրեմը մի խորթ մոր ծրենա ուզրմ ես ինձ բաղա տաս, մի տղա ունես, էն էլ ուզրմ ես, որ ուրեմը չը ըլի, լ(վն էն ա՝ ոռելս քաշեմ, քյն(ւմ երգրե երգիր կորչեմ: Ա՛յ տհե ա ըլրմ, իմ բալա»<sup>7</sup>: Վերջին՝ «Ա՛յ տհե ա ըլրմ, իմ բալա» բանաձևով, բանասացը դիմելով ունկնդրին՝ ամբողջացնում, ամփոփում է իր պատումը: Բանաձևի այս տիպը փոխարինում է ավանդական եզրափակիչ բանաձևին և ավելի գործածական է դառնում: Օրինակ՝ «Վերջը տհե ա, ցավըտ տանեմ»<sup>8</sup> կամ «Ա՛յ էտքան ա ըլել»<sup>9</sup>, «Ապրե՛ք, տրանով էլ վերջ»<sup>10</sup>:

Տավուշի հեքիաթներին բնորոշ են նաև հեքիաթային իրողությունների ու դեպքերի անցողիկության փիլիսոփայական եզրահանգում-բանաձևը, որով ամրագրվում է ունայնության գաղափարը: Օրինակ՝ «Անց ա կենրմ քյնրմ»<sup>11</sup>: XX դ. 70–80-ական թվականների բանասացների մոտ նկատելի է ավանդական եզրափակիչ բանաձևերից խուսափելու և հեքիաթի ավարտը հակիրճ հայտարարելու երևույթը: Օրինակ՝ «Ես իմ հեքիաթը պրծա»<sup>12</sup>:

Տավուշի հրաշապատում հեքիաթներն ունեն լավատեսական ավարտ, որոնք հաստատվում են ավանդական կայուն եզրափակիչ բանաձևերով: Տավուշի հեքիաթների եզրափակիչ բանաձևերին բնորոշ են հերոսների նպատակի իրականացումը, երջանիկ հարսանեկան խնջույքը, հերոսների երկարակեցությունը, բարոյախոսական ավարտը, ցանկությունների իրագործման մաղթանքն ունկնդրներին, բարին՝ այս և չարն այն աշխարհ ուղղորդելը և այլն: XIX դ. վերջին գրաված հեքիաթներն ավարտվում են մեկից ավելի ավանդական բանաձևերով: Առաջին բանաձևը տարբերակում և ուղղորդում է բարու և չարի դրսևորումները, իսկ երկրորդ բանաձևը բաժանում է խորհրդանշական երեք խնձորը: Օրինակ՝ «Տղեն կյալուց հաղաղ արնիցը քսրմ ա հոր աչքերը պ(ցրմ: Օխտը օր, օխտը քշեր

<sup>6</sup> Է. Հ. Խենյան և Ն. Տավուշ.– Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՀԱԲ), հ. 21, Երևան, 2000, էջ 103, 17 (17), «Ձկնորսի որդին»:

<sup>7</sup> Է. Խենյան և Բջևան (Ձորոփոր).– ՀԱԲ, հ. 25, Երևան, 2008, էջ 30, 1 (1), «Անմահական ճ(ւր պիրոդ տղեն» (այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են):

<sup>8</sup> ՀԱԲ, հ. 21, էջ 116, 22 (22), «Թաքավորի հրամանը»:

<sup>9</sup> ՀԱԲ, հ. 21, էջ 134, 38 (38), «Կնգա էշխը»:

<sup>10</sup> ՀԱԲ, հ. 25, էջ 149, 36 (36), «Հորսկանն ու գազաննին»:

<sup>11</sup> ՀԱԲ, հ. 25, էջ 192, 57 (57), «Ֆողի կիտուկն ու կրլխին», էջ 193, 58 (58), «Վախկոտի բախտը»:

<sup>12</sup> ՀԱԲ, հ. 25, էջ 162, 39 (39), «Թաքավորի ախիկն ու ավագակապետը»:

հրսանիք ա անրմ, իրան տղին էլ շինրմ ա թաքավոր, ասրմ ա. «Ես պռավել եմ, հիմիկանց դենը տ(ւ թաքավորութին արա»։ Խերը ըստի, շառը՝ ընդի։ Ասծանից իրեք խնձոր վե կյ(, մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ ալամ աշխարքին»<sup>13</sup>։ Ակնհայտ է, որ եզրափակիչ երկու բանաձևերը հեքիաթի սյուժեի հետ կապ չունեն և կարող են հանդես գալ ցանկացած հեքիաթի վերջում։ Բարին, լավն ուղղորդելով դեպի այս աշխարհը՝ փորձանքը և չարը բանաձևն ուղարկում են «ընդի» (այնտեղ կամ անդին), այս աշխարհից այն կողմ, «այն աշխարհը», որտեղ հերոսը հաղթահարել է բազում դժվարություններ ու վերադարձել իր աշխարհը։

Տավուշի հեքիաթներում առկա են նաև չարի և բարու ուղղվածության տեղական ինքնատիպ դրսևորումներ, ինչպես, օրինակ, «Խերն՝ ըստի, շառը՝ Բեջանանց տանը»<sup>14</sup> կամ «Խերը՝ ըստի, շառը՝ Բեջանանց քրթըլամանըմը»<sup>15</sup>, կամ «Խերը մեր քրթըլամանըմը, շառը՝ մեր թշնամուն»<sup>16</sup>։ Գոյալամանը բարեկեցիկ, հանգստավետ կյանք խորհրդանշող կենցաղային առարկա է, որի մեջ պահվող գոյուներին ուղղված բարի մաղթանքն անուղղակի տարածվում է ունկնդիրների կյանքի ու կենցաղի վրա, միչդեռ, չարը ուղղորդելով դեպի վատահամբավ Բեջանանց տան ու գոյալամանի վրա, խոսքի գործառնությամբ փորձում են կասեցնել ու վնասագերծել չարը և խուսափել նրա հետևանքներից։ «Բեջանանց տունը», «Բեջանանց քրթըլամանը» ու «թշնամին» հանդես են գալիս նույն հարթության վրա, իրենց նշանակությամբ համարժեք են և զբաղեցնում են եզրափակիչ բանաձևի երկրորդ մասն ու կոնկրետացնում, ավելի առարկայական են դարձնում չարի և փորձանքի կրողներին։ Հատկանշական է, որ Տավուշի հեքիաթների եզրափակիչ բանաձևերում մեծ մասամբ խնձորներն ընկնում են «ասծանից», «ըստանից»։ Վերջընթեր բանաձևի խնձորը նույն գործառնություն ունի, ինչ որ հրաշածին հերոսների (աստվածներ) դրախտային այգու անմահական խնձորը, այն է՝ երիտասարդություն և անմահություն պարզնել ուտողին։ Անկասկած, անմահական խնձորների՝ աստվածների պատկանելու հանգամանքն է պահպանվել Տավուշի բանաձևերի համատեքստում։ Բանաձևը ենթադրել է տալիս, որ խնձորը ստացողին երկարակեցություն ու առողջություն է պարզնելու։ Հիմնականում խնձորների թիվը կայուն է և բաժանարարն էլ, ավանդույթը պահպանելով, խնձորները բաշխում է լսողին, ասողին և աշխարհին («ալամ աշխարքին»), սակայն երբեմն բանասացները սիրում են ձևափոխել բանաձևը, ավելացնել խնձորների թիվը և այն բաժանել ըստ իրենց հայեցողության։ Օրինակ՝ «Ըսծանի թող օխտը խնձ(ր վեր ընգնի, մինը՝ լսողին, օխտը՝ ձայնագրողին, քառասունօխտն էլ՝ ժողովուրթին»<sup>17</sup> կամ «Ըստանից իրեք

<sup>13</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ (այսուհետև՝ ՀԾՀ), հ. VI, Երևան, 1973, էջ 316, «Մայիֆ թաքավորի հեքիաթը»։

<sup>14</sup> ՀԱԲ, հ. 25, էջ 79, 12 (12), «Գախարդական մատանին»։

<sup>15</sup> ՀԱԲ, հ. 25, էջ 114, 22 (22), «Որդուն ուրացող մայրը»։

<sup>16</sup> ՀԱԲԲԱ, FF VII: 8153,01-8162,00, Վ. Ս վ ա գ լ Ղ ա ն. Բջանի բանահյուսություն, 1960, «Արթարությունը քթնվավ»։

<sup>17</sup> ՀԱԲ, հ. 21, էջ 109, 18 (18), «Էրագ հանող տղեն ու թաքավորի բախտը»։

խրնձոր վեր ընգավ, մինը՝ ինձ, պատավ կնիկ եմ, ուտեմ սիրտս հովանա, մինը՝ էս ջահելին, էնքան կյրեց՝ կուռը բզարեց, մինն էլ ծեզ՝ ա՛րալենի ջան»<sup>18</sup>:

Եզրափակիչ բանաձևերի մի տեսակն էլ մաղթանք-բանաձևերն են, որոնք փաստում են հեքիաթի հերոսների կատարված ցանկությունների մասին և նույնը մաղթում ունկնդիրներին: Բանաձևերի այս տեսակը, թերևս, ամենագործածականն ու տարածվածն է: Օրինակ՝ «Մրանք հասան իրանց մուրազին, տ(ւ)ք էլ հասնեք ծեր մուրազին»<sup>19</sup> կամ՝ «Նհ(ն)ք իրանց մուրազին հասնեն, մենք էլ մեր մուրազին հասնենք»<sup>20</sup>, «Թող նրանք բախտավորվեն իրանց մհար, տ(ւ)ք էլ ծեզ համար բախտավորվեք»<sup>21</sup>, կամ՝ «Աստված բոլորին էլ առողջ պահի, լ(վ) մարդկանց էլ հետը, լսողներին էլ հետը»<sup>22</sup>: Պետք է նշել, որ մաղթանք-բանաձևերը միայն ունկնդիրներին չեն ուղղված: Բանասացները հնարավորինս լայնացնում են մաղթանքի սահմանները և տվյալ հասարակությանն անհրաժեշտ բոլոր ցանկությունները համատեղում մեկ բանաձևի մեջ: Օրինակ՝ «Ըստից հետո աշխարհին խաղաղություն ըլի, մահին՝ թանգություն, հացին՝ էժանություն, ժողովրդին էլ՝ կյանք, կարողություն»<sup>23</sup>: Այս բանաձևն ակնհայտորեն ավանդված է առասպելաստեղծ ժամանակներից և կապվում է լուսնային առասպելների ու նաև նորալուսնի աղոթքների հետ<sup>24</sup>: Հեքիաթի հերոսը գնում է այն աշխարհ և այնտեղից վերադառնում վերակենդանացած ու թարմացած, ինչպես նորալուսինը, որը դիտվում է իբրև անդրաշխարհի ավետաբեր, որից բարեբեր նոր լուրեր են հայցվում՝ առատության, խաղաղության, առողջության, կյանքի հարատևման, կենսամիջոցների ապահովման մասին<sup>25</sup>: Նորալուսնի գործառույթը փոխանցվել է հեքիաթի հերոսին և այս պարագայում նրանից ակնկալվող բարեբեր լուրերը վերաձել են հեքիաթային մաղթանք-բանաձևի: Սույն բանաձևային մոդելը նույնությամբ կիրառվում է և՛ հեքիաթում, ինչպես վերը բերված բանաձևում, և՛ աղոթքում: Օրինակ՝

Լուսունկիկ ջա՛ն, լուսունկի՛կ, կեցի՛ր,

.....  
 Գնացիր քրնց ճերմակ հալիվոր,  
 Դարձուր քրնց ջահել թագավոր,  
 Քու ջիվան կյանքին մատաղ,  
 Դրախտեն ի՛նչ բերիր խաբար.

<sup>18</sup> ՀԱԻԲԱ, FF IX: 9869,01-9878,00, Ա. Կ ա ր ա պ է տ յ ա ն. Նոյեմբերյանի շրջանի ժողովրդական բանահյուսությունից, 1961, «Օխտը ախպերն ու մի քիրը»:

<sup>19</sup> ՀԺՀ, VI, էջ 347, «Սուլթան Մուրադ թաքավորի հեքիաթը»:

<sup>20</sup> ՀԱԲ, հ. 25, էջ 39, 3 (3), «Պճի հեքիաթը»:

<sup>21</sup> ՀԱԲ, հ. 25, էջ 155, 37 (37), «Գորուստների խանութը»:

<sup>22</sup> ՀԱԲ, հ. 21, էջ 59, 7 (7), «Քառասուն աղջկա հեքիաթը»:

<sup>23</sup> ՀԱԻԲԱ, FF VII: 8321,01-8322,00, Ա. Ն ա գ ի ն յ ա ն. Նոյեմբերյանի շրջանի ժողովրդական բանահյուսություն, 1961:

<sup>24</sup> Մ. Ս ր է ղ յ ա ն. Երկեր, հ. Է, Երևան, 1965, էջ 45, Մ. Հ ա ր ու թ յ ու ն յ ա ն. Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Երևան, 2006, էջ 208, 448:

<sup>25</sup> Մ. Բ. Հ ա ր ու թ յ ու ն յ ա ն. Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 62:

*Հորս ու մորս հոգուն արքայություն,  
Մեղքերիս թողություն,  
Հացին էժանություն,  
Մահին թանկություն,  
Աշխրրքին խաղաղություն»<sup>26</sup>:*

Իրենց տեսակով ինքնատիպ են այն բանաձևերը, որոնք հաստատում են հեքիաթի հերոսի «մինչև էսօր» ապրելու փաստը, որը, ըստ Ռոշիյանուի, բանասացի որոշակի վերաբերմունքն է հեքիաթային հերոսի նկատմամբ, որով նա կրկին փորձում է համոզել, որ կատարված դեպքերը հավաստի են<sup>27</sup>: Նման բանաձևերի օգնությանը դիմում են այն բանասացները, ովքեր հավատում են հեքիաթային իրականությանը և համակրանքով են լցված հերոսի նկատմամբ: Օրինակ՝ «Դե մեքը էտ ա մահացած էր, հերն էլ մահացել ա: Ախպորտանցը էլ պ(ն չի ասեց, էտ խազնի պլանքի տեղը գիդըմ էր, հանեց պ(ց արավ, վերջապես իրան համար մի շենք շինեց ու սկսեցին ըտեղ ապրիլը, մինչև սօր էլ ապրըմ են»<sup>28</sup> կամ՝ «Դե արթեն փողով ա առել, կյ(վիսը կտրըմ ին էլի, լեզուն դաքին կարճացավ, տ(ռ(ն մարթ ու կնիկ, մինչև էսօր էլ ապրըմ են»<sup>29</sup>, կամ՝ «Էկան ապրեցին ըտեղ, մինչև սօր էլ ապրըմ են»<sup>30</sup>: Եզրափակիչ բանաձևերի այս տեսակը ոչ միայն հաստատում է հեքիաթային հերոսների հարատևությունը, այլև անուղղակի առաջադրում է հեքիաթի ժանրի կենցաղավարման շարունակականության գաղափարը:

Եզրափակիչ բանաձևի գեղարվեստական հնարքներից է հեքիաթասացի մասնակցությունը հեքիաթի հերոսների հարսանեկան խնջույքին և հյուրասիրվելը, որն իր անիրական ու ծիծաղաշարժ ոճով լիցքաթափող ազդեցություն է թողնում ունկնդիրների վրա և մեկ անգամ ևս հաստատում, որ հեքիաթը հրաշապատում է ու երևակայության արդյունք: Օրինակ՝ «Օխտն օր, օխտը քշեր հրրսանիք արին, կերան-խմեցին, ինձ մի բաժակ արաղ չտվին, սեե դրաղիցը թամաշա արի էլի: Կերան-խմեցին, իրանց հալալ ըլի, հարսը պիրին իրանց տուն»<sup>31</sup>:

Ի տարբերություն հրաշապատում հեքիաթների՝ իրապատում հեքիաթները մեծ մասամբ ավարտվում են բարոյախրատական եզրահանգում-բանաձևով կամ առած-ասացվածքով՝ որպես պատումի պատճառահետևանքային շղթայի տրամաբանական ավարտ և կենսափորձով հաստատված փաստ: Օրինակ՝ «Տ( փոս ա կրտորըմ, քըցըմ մեչը, ֆըեղը վըր(տալըի ու ասըմ ա. «Մո՛ւտ ա, բոզը բոզ կըլի, ինչ ջինս ուզըմ ա ըլի, ուզըմ ա իսանի ծըիծ ծըծի, ուզըմ ա՝ անասունի»<sup>32</sup> կամ՝ «Ասըմ ա. «Ա՛յ, վըերդի քյն(ս, տըհե մահը չորս դոլտ կտրած ա: Դե՛ էտ տ(ռ, քյն( ծըեր տուն ու լ(վ

<sup>26</sup> Մ. Արեղյան. նշվ. աշխ., հ. Է, էջ 45 (աղոթքը գրառել է Գ. Վանցյանը):

<sup>27</sup> Н. Р о ш и я н у. Традиционные формулы сказки. М., 1974, с. 72–78.

<sup>28</sup> ՀԱԲ, հ. 25, էջ 89, 15 (15), «Թարավորի պուճուր տղեն էն դունըմը»:

<sup>29</sup> ՀԱԲ, հ. 21, էջ 94, 14 (14), «Ծկ(ն կյոխ չի է՛, թաքավորի ախչկա կյոխ ա»:

<sup>30</sup> ՀԱԲ, հ. 25, էջ 87, 14 (14), «Դե ախչկա շաքիքը»:

<sup>31</sup> ՀԱԲ, հ. 25, էջ 72, 10 (10), «Ջոմշուդն ու Մոմշուդը»:

<sup>32</sup> ՀՏՀ, VI, էջ 404, «Բոզը բոզ կըլի, ուզըմ ա իսանի ծըիծ ծըծի, ուզըմ ա՝ ասըլանի»:

գլորացի, վրերդի գլ(նք կա, ընդի էլ մահ կա»<sup>33</sup>, կամ՝ «Աշխարի պ(նը սրհենց կըլի, տ(ւ կիջնես, էս կբարձրանամ»<sup>34</sup>, «Խէ՛ լք, այո, աշխարքը խելքն ա տիրըմ, բա նոր է՞ս գիղըմ»<sup>35</sup>։

*Տավուշի մեր օգտագործած հեքիաթների եզրափակիչ կայուն բանաձևերի քննությունը ցույց է տալիս, որ դրանք, պահպանելով հայկական հեքիաթային ժաժանությունը բնորոշ կարևորագույն տարրերն ու օրինաչափությունները, միաժամանակ խարսխված են երկրամասի խոսվածքի վրա և առատորեն օգտագործելով խոսվածքի լեզվամիջոցները՝ ստեղծել են բանաձևերի ինքնատիպ տարրերակներ։ Հեքիաթներում պահպանված չափածո ավարտի քննությունը ցույց է տալիս, որ այն նախարան-սկսվածքի հետ շրջանակի դեր է կատարել նրա համար, օրգանապես կապված չէ հեքիաթի պոմեի հետ, որն էլ պատճառ է հանդիսացել, որ այն ժամանակի ընթացքում կորցնի իր կենսունակությունը, տարանջատվի նրանից և իսպառ դադարի գոյություն ունենալ որպես հեքիաթային բանաձև։*

*Եզրափակիչ բանաձևերի ավանդական տեսակները թեև շարունակում են կենցաղավարել Տավուշի հեքիաթներում, սակայն նկատելի է դրանց կենսունակության կորուստը։ Դրանք փոխարինվում են ավելի կարճառոտ ու սեղմ նորահայտ բանաձևերով, որոնք վերջին շրջանում տիրապետող են դարձել։ Յուրաքանչյուր բանասաց, կայուն բանաձևի հիմնական կառույցը պահպանելով, յուրովի շտկումներ (հավելում կամ պակասեցում) է անում, որը հանգեցնում է որակական փոփոխությունների։*

*Տավուշի հեքիաթների եզրափակիչ կայուն բանաձևերն իրենց ինքնատիպությամբ ու տեղական նկարագրով հարստացրել են համահայկական հեքիաթային ավանդական բանաձևերը։*

## ФИНАЛЬНЫЕ УСТОЙЧИВЫЕ ФОРМУЛЫ В ТАВУШСКИХ СКАЗКАХ

ՋՏԵՐ ԽԵՄՉՅԱՆ

### Резюме

На анализе финальных устойчивых формул в тавушских сказках выявлены их многообразие и свойства. В тавушских волшебных и бытовых сказках финальным устойчивым формулам свойственны нравоучительные концовки, пожелания осуществления добрых намерений, направления добра в этот и зла в тот свет, распределение падающих с неба символическо-сказочных яблок. Обстоятельно расследуются основные группы тавушских устойчивых финальных формул, их структуры, цель применения, использование художественных выдумок и

<sup>33</sup> ՀԺՀ, VI, էջ 484, «Մարթն ու մահը»։

<sup>34</sup> ՀԱԲ, հ. 21, էջ 125, 29 (29), «Աշխարի գործը վրէ՛նց կըլի»։

<sup>35</sup> ՀԱԲ, հ. 21, էջ 124, 28 (28), «Ամենաթանկարժեք պ(նը)»։

элементов тавушского говора сказочниками. А также исследованы стихотворные концовки тавушских сказок, не связанных с содержанием сказки, а просто подчеркивающих конец повествования и напоминающих слушателям время отхода (удаления). Финальные устойчивые формулы тавушских сказок богатством и самобытностью дополняют общеармянское сказочное наследие.

## FINAL STABLE FORMULAS IN TAVUSH TALES

*ESTHER KHEMCHYAN*

### S u m m a r y

The diversity and properties of Tavush tales are found in the analysis of their final stable formulas. In Tavush fairy and household tales final stable formulas have preachy endings, wishes of implementation of good intentions, directing of good to this world and evil to the other, distribution of symbolic-tale apples falling from the sky. The major groups of Tavush stable final formulas, their structure and purpose of application, the use of artistic elements and fiction in the storyteller's Tavush dialect are thoroughly investigated. The verse endings of Tavush tales, not related to the content, but simply emphasizing the end of the tale and reminding the audience the time of leaving (going out) are researched, as well. The final stable formulas in Tavush tales complement with richness and identity all-Armenian tale heritage.